

ՍՐՔԱԶԱՆ ՀԱՅՐԸ ԿԸ ՆԱԽԱԳԱՀԷ ՍՈՒՐԲ ԱՔԳԱՐ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ  
ԾԻՆԱԿԱՆ ԱՆԴԱՄԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ

Կիրակի, Փետրուար 21ին Սուրբ Պատարագի աւարտին Առաջնորդ Սրբազան Հօր Նախագահութեամբ, եկեղեցւոյ սրահին մէջ տեղի ունեցաւ Սուրբ Աբգար Հայց. Եկեղեցւոյ Ծխական Անդամական ժողովը: Բնական է, նիւթական փոխառութիւն կատարեցին: Սրբազան Հայրը քաջալերեց զիրենք, որ Աստուծոյ օգնութեամբ եւ հաւատացեալներու նուիրատուութեամբ ժամանակի ընթացքին կը փակեն իրեն պարտամուրհակը: Ժողովի ընթացքին տեղի ունեցան ընտրութիւններ: Իր փակման խօսքին մէջ Սրբազան Հայրը գնագիատեց Տէր Հօր նուիրեալ ծառայութիւնը, ինչպէս նաեւ Ծխական Խորհուրդին, Տիկնանց Միութեան եւ բոլոր կամաւոր ծառայողներուն աշխատանքը եւ իր օրհնութիւնները բաշխեց անոնց: